ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-------» ---------- 2019թ. **N------ -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ.41-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝

Երևան համայնքի սեփականություն համարվող Սասունցի Դավթի փողոցի հ.87 և 87ա հասցեում գտնվող շենքի 2-րդ հարկի 39.5քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով 3 /երեք/ տարի ժամկետով տրամադրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացվող նախագծով առաջարկվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Սասունցի Դավթի փողոցի հ.87 և 87ա հասցեում գտնվող շենքի 2-րդ հարկի 39.5քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով 3 /երեք/ տարի ժամկետով տրամադրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

Էրեբունի վարչական շրջանում համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի կազմակերպման նպատակով վերոհիշյալ հասցեում գտնվող վարչական շենքից Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ.415-Ա և Երևանի քաղաքապետի 18.08.2012թ. հ.5846-Ա որոշումներով 271.5քմ մակերեսով տարածքն անհատույց օգտգագործման իրավունքով անժամկետ տրամադրված է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը: Քննարկվող տարածքը գտնվում է նախարարությանը տրամադրված նշված 271.5քմ մակերեսով տարածքի հարևանությամբ: Վերոհիշյալ որոշումների ընդունման պահին այն զբաղեցված է եղել ՀՀ վիճակագրական ծառայության Էրեբունու ստորաբաժանման կողմից:

Էրեբունի վարչական շրջանի բնակչությանը որակյալ և անխափան ծառայություններ մատուցելու անհրաժեշտությամբ պայմանավորված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը դիմել է քննարկվող տարածքը նախարարությանը տրամադրելու խնդրանքով:

Ներկայումս քննարկվող տարածքը չի օգտագործվում Երևանի քաղաքապետարանի ենթակայության կազմակերպությունների կամ ստորաբաժանումների կողմից և տարածքի տրամադրման նպատակահարմարության վերաբերյալ առկա են Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչության դրական դիրքորոշումները:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2019 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.41-Ն որոշման համաձայն Երևան համայնքի սեփականությունը համարվող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվում է Երևան քաղաքի ավագանին, հետևաբար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփակյանություն համարվող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ